ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի փետրվարի 4-ին
Հայաստանի Հանրապետության Նախագահի
առարկությամբ և առաջարկությամբ

ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(վերնագիրը խմբ. 07.03.18 ՀՕ-143-Ն)

ԳԼՈՒԽ 1

(գլուխը լրաց. 07.03.18 ՀՕ-143-Ն)

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

(վերնագիրը լրաց. 07.03.18 ՀՕ-143-Ն)

~~Հոդված 2. Պետական պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակային ապահովությունը և այլ սոցիալական երաշխիքները~~

~~1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի՝~~

~~1) *(կետն ուժը կորցրել է 04.03.15 ՀՕ-14-Ն)*~~

~~2) Սահմանադրական դատարանի դատավորը՝~~

~~ա. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքում՝ անկախ տարիքից,~~

~~բ. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում,~~

~~գ. *(ենթակետն ուժը կորցրել է 30.06.20 ՀՕ-377-Ն)*~~

~~դ. *(ենթակետն ուժը կորցրել է 30.06.20 ՀՕ-377-Ն)*~~

~~2.1) Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում առնվազն հինգ տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են համապատասխանաբար դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ իր պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքով.~~

~~2.2) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.~~

~~2.3) առնվազն մեկ ժամկետ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.~~

~~3) դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարեցվել կամ դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ~~

~~ճանաչվելու կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.~~

~~4) դատախազի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որը պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.~~

~~5) հակակոռուպցիոն կոմիտեում առնվազն 10 տարի հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցրած անձը, որի լիազորությունները դադարել են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.~~

~~5.1) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում առնվազն 10 տարի ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որի լիազորությունները դադարել են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.~~

~~5.2) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայությունում առնվազն 10 տարի քննիչի պաշտոն զբաղեցրած անձը, որը պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված հիմքով կամ 63 տարին լրանալուց հետո՝ 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.~~

~~5.3) Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայությունում առնվազն 10 տարի քննիչի պաշտոն զբաղեցրած անձը, որը պաշտոնից ազատվել է «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.~~

~~6) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.~~

~~7) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոն զբաղեցրած կամ հինգ տարի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.~~

~~7.1) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնն զբաղեցրած կամ վեց տարի Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.~~

~~8) սույն օրենքի հավելված N 1-ով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.~~

~~9) Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, Կառավարության անդամները, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորները, Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամները, Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատի նախագահը, դատախազները, հակակոռուպցիոն կոմիտեի, քննչական կոմիտեի ծառայողները՝ իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում նշված դեպքում պետական պաշտոն զբաղեցրած անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական կազմակերպություններում ապահովվում է բժշկական սպասարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:~~

~~3. Պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի զբաղեցնում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն:~~

~~*(2-րդ հոդվածը լրաց. 19.05.14 ՀՕ-29-Ն, 01.12.14 ՀՕ-198-Ն, փոփ. 04.03.15 ՀՕ-14-Ն, խմբ., փոփ. 17.01.18 ՀՕ-43-Ն, փոփ., լրաց., խմբ. 07.03.18 ՀՕ-143-Ն, փոփ. 21.06.18 ՀՕ-341-Ն, լրաց. 01.07.19 ՀՕ-*~~

~~101-Ն, 11.12.19 ՀՕ-313-Ն, փոփ. 21.01.20 ՀՕ-68-Ն, 30.06.20 ՀՕ-377-Ն, խմբ., փոփ. 24.03.21 ՀՕ-155-Ն)~~

~~(24.03.21-օրենքն ունի անցումային դրույթ)~~

«Հոդված 2. Պետական պաշտոն զբաղեցրած անձին կենսաթոշակ նշանակելու պայմանները

1. Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունի՝

1) Սահմանադրական դատարանի դատավորը՝

ա. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքում՝ անկախ տարիքից, կամ

բ. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կամ 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով, կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում,

2) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

3) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոն զբաղեցրած կամ հինգ տարի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

4) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաշվեքննիչ պալատի անդամի կամ առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի կամ վեց տարի Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

5) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

6) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ գլխավոր դատախազի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

7) առնվազն մեկ ժամկետ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

8) դատավորի պաշտոնում առնվազն 10 օրացուցային տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարեցվել կամ դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

9) դատախազի պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ կետերով, 63-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով և պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

10) հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. պաշտոնից ազատվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 11-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով և պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

11) քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. պաշտոնից ազատվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով և պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

12) պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որը՝

ա. պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» օրենքի 25.1-ին հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերով, 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկով և պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ, կամ

բ. պաշտոնից ազատվել է է «Հարկային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով նախատեսված հիմքով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

13) սույն օրենքի N 1 հավելվածով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում առնվազն 15 օրացուցային տարի պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում: Սույն կետում նշված 15 օրացուցային տարում չեն հաշվառվում այն պաշտոններ զբաղեցնելու ժամանակահատվածները, որոնցից նա ազատվել է իր նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու հիմքով կամ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է (քրեական հետապնդումը չի իրականացվել) ոչ արդարացնող հիմքով կամ պաշտոնից ազատվել է կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով.

14) Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորը, Կառավարության անդամը, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորը, Բարձրագույն դատական խորհրդի անդամը, Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատի նախագահը, դատախազը, հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը՝ իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված մեկից ավելի հիմքերով միաժամանակ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձին կենսաթոշակ նշանակվում է այդ հիմքերից մեկով՝ իր ընտրությամբ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում նշված դեպքում պետական պաշտոն զբաղեցրած անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական կազմակերպություններում ապահովվում է բժշկական սպասարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Սույն օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում պետական պաշտոն զբաղեցրած անձը սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի զբաղեցնում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն: Սույն օրենքի իմաստով հանրային պաշտոն է համարվում նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնը:

5. Սույն հոդվածով սահմանված պայմանները բավարարելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության բաղաքացին, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի Հայաստանի Հանրապետության

բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում հաշվառված լինելու ժամանակահատվածում:

~~Հոդված 3. Պետական պաշտոն զբաղեցրած անձի ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքները պետական պաշտոն զբաղեցրած անձի մահանալու (զոհվելու) դեպքում~~

~~1. Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, Կառավարության անդամի, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորի, Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հաշվեքննիչ պալատի նախագահի, դատախազի, հակակոռուպցիոն կոմիտեում, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձի կողմից իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով մահանալու (զոհվելու) դեպքում՝~~

~~1) նրա հուղարկավորությունը կազմակերպած անձին վճարվում է հուղարկավորության նպաստ,~~

~~2) նրա ընտանիքին տրվում է միանվագ դրամական օգնություն,~~

~~3) նրա ընտանիքի՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող անդամներին նշանակվում և վճարվում է կենսաթոշակ:~~

~~2. Միանվագ դրամական օգնություն, հուղարկավորության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, նշանակելու և վճարելու կարգը, հուղարկավորության նպաստի չափը, միանվագ դրամական օգնության չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~*(3-րդ հոդվածը լրաց. 19.05.14 ՀՕ-29-Ն, փոփ. 17.01.18 ՀՕ-43-Ն, 07.03.18 ՀՕ-143-Ն, 21.01.20 ՀՕ-68-Ն, 24.03.21 ՀՕ-155-Ն)*~~

~~*(24.03.21 ՀՕ-155-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

Հոդված 3. Պետական պաշտոն զբաղեցրած անձի ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքները պետական պաշտոն զբաղեցրած անձի մահանալու (զոհվելու) դեպքում

1. Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, Կառավարության անդամի, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հաշվեքննիչ պալատի նախագահի, դատախազի, հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն, պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձի կողմից իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով մահանալու (զոհվելու) դեպքում, սույն մասում նշված անձի՝

1) հուղարկավորությունը կազմակերպած անձին վճարվում է հուղարկավորության նպաստ,

2) ընտանիքին տրվում է միանվագ դրամական օգնություն,

3) ընտանիքի անդամներից մեկին՝ ընտանիքի համար նշանակվում է կենսաթոշակ: Ընտանիքի անդամներից մեկի պահանջով նրա բաժնեմասըԿառավարության սահմանած կարգով նշանակվում և վճարվում է առանձին՝հաշվարկվելով համամասնորեն:

2. Սույն օրենքի իմաստով մահացած (զոհված) պետական պաշտոն զբաղեցրած անձի ընտանիքի անդամ են համարվում սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի՝

1) ծնողները, ամուսինը, եթե չեն աշխատում և մահվան օրվա դրությամբ՝

ա. լրացել է նրանց տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը, կամ

բ. ճանաչված են եղել հաշմանդամություն ունեցող անձ.

2) 18 տարին չլրացած երեխան (ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելու դեպքում՝ մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև իր 26 տարին լրանալը).

3) 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակը, եթե նա հաշմանդամ է ճանաչվել մինչև իր 18 տարին լրանալը և ունի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում,

4) ամուսինը կամ սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի երեխայի օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի 14 տարին չլրացած՝ երեխայի խնամքով, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում:

3. Միանվագ դրամական օգնություն, հուղարկավորության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, նշանակելու և վճարելու կարգը,

հուղարկավորության նպաստի չափը, միանվագ դրամական օգնության չափը սահմանում է Կառավարությունը:

~~Հոդված 4. Կենսաթոշակի ընտրության իրավունքը~~

~~1. Սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով սահմանված պետական կենսաթոշակների իրավունք ունեցող անձին նշանակվում է մեկ կենսաթոշակ՝ իր ընտրությամբ:~~

Հոդված 4. Կենսաթոշակի ընտրության իրավունքը

1. Սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով միաժամանակ պետական կենսաթոշակների իրավունք ունեցող անձին նշանակվում է մեկ կենսաթոշակ՝ իր ընտրությամբ:

2. Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով պետական կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է անձին սույն օրենքով կենսաթոշակ նշանակելու օրվանից, իսկ այդ օրվանից հետո վճարված այլ կենսաթոշակի գումարը պահվում (հաշվանցվում) է սույն օրենքով նշանակված կենսաթոշակի գումարից:

~~Հոդված 5. Պետական պաշտոն զբաղեցրած անձի և նրա ընտանիքի անդամների կենսաթոշակը հաշվարկելու կարգը~~

~~1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է Կ=Հ*Գ+ՄՍ*ՄՍԱ բանաձևով, որտեղ՝~~

~~Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,~~

~~Հ-ն՝ սույն օրենքով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը (այսուհետ՝ հիմնական կենսաթոշակ),~~

~~Գ-ն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների համար սահմանված առավելագույն գործակիցը (այսուհետ՝ գործակից),~~

~~ՄՍ-ն՝ մասնագիտական ստաժը,~~

~~ՄՍԱ-ն՝ մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը:~~

~~1.1. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2.3-րդ կետով նախատեսված անձանց՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործակիցը հավասար է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Վճռաբեկ դատարանի դատավորի համար սահմանված գործակցին:~~

~~2. 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված՝ պետական պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս մասնագիտական ստաժում հաշվառվում են միայն 2014 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածները:~~

~~3. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը, գործակիցը փոխվելու դեպքում:~~

~~4. Մասնագիտական ստաժը հաշվարկելու կարգը (մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները), հիմնական կենսաթոշակի չափը, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~*(5-րդ հոդվածը փոփ. 01.12.14 ՀՕ-198-Ն, լրաց. 07.03.18 ՀՕ-143-Ն, փոփ. 21.06.18 ՀՕ-341-Ն)*~~

Հոդված 5. Պետական պաշտոն զբաղեցրած անձի և նրա ընտանիքի անդամների կենսաթոշակը հաշվարկելու (վերահաշվարկելու) կարգը

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 13-րդ և 14-րդ կետերում նշված պաշտոններ զբաղեցրած անձին, սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքին նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

Կ=Հ x Գ + ԿՀՍ x ԿՀՍԱ - ԿԿ բանաձևով, որտեղ՝

Կ-ն՝ կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ սույն օրենքով կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը (այսուհետ՝ հիմնական կենսաթոշակ),

Գ-ն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների (որոնք զբաղեցնելու ժամանակահատվածները հաշվառվում են կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժում) համար սահմանված առավելագույն գործակիցը (այսուհետ՝ գործակից),

ԿՀՍ-ն՝ կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժը՝ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված այն պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը (պաշտոններ զբաղեցնելու ժամանակահատվածների հանրագումարը), որոնցից նա չի ազատվել է իր նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու հիմքով կամ նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է (քրեական հետապնդումը) չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով կամ պաշտոնից ազատվել է կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքով.

ԿՀՍԱ-ն՝ կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժի մեկ տարվա արժեքը (այսուհետ՝ մեկ տարվա արժեք),

ԿԿ՝ անուիտետի կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակի՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով տվյալ պաշտոն զբաղեցրած անձի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված լրացուցիչ միջոցներից ձևավորված ամսական չափը (այսուհետ՝ կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ):

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը, ստաժի մեկ տարվա արժեքը փոխվելու դեպքում:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերում նշված պաշտոններ զբաղեցրած անձին կամ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքում նրա ընտանիքին նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է.

1) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 55 տոկոսի չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից չէ կամ կուտակային բաղադրիչի մասնակից է, սակայն նրա համար առկա չէ կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ,

2) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 55 տոկոսի և նրան վճարվող կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափի տարբերության չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից է և նրա համար առկա է կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ:

4. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 9-12-րդ կետում նշված պաշտոններ զբաղեցրած անձին կամ սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքում նրա ընտանիքին նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է.

1) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 50 տոկոսի չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից չէ կամ կուտակային բաղադրիչի մասնակից է, սակայն նրա համար առկա չէ կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ:

2) զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափի ու հավելավճարի հանրագումարի 50 տոկոսի և նրան վճարվող կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափի տարբերության չափով, եթե տվյալ պաշտոն զբաղեցրած անձը կուտակային բաղադրիչի մասնակից է և նրա համար առկա է կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափ:

5. Սույն հոդվածով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել այն պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը, որից հաշվարկվել է կենսաթոշակը:

6. Սույն հոդվածով հաշվարկված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է.

1) սույն օրենքով կենսաթոշակը նշանակելուց հետո անուիտետի կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակ նշանակելու դեպքում,

2) նշանակված կուտակային կենսաթոշակի՝ պետական բյուջեի հատկացումներից ձևավորված չափը փոփոխվելու կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակը դադարելու դեպքում:

7. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս պաշտոնային դրույքաչափը ու հավելավճարը հաշվարկվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ նրա՝ դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի տևողությունը և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով Վճռաբեկ դատարանի դատավորի համար սահմանված գործակիցը:

8. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է այդ մասում նշված հանգամանքն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից: Կենսաթոշակի չափը վերահաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված մասնակիցների ռեեստրը վարողը կենսաթոշակ նշանակող մարմնին տրամադրում է Կառավարության սահմանած կարգով:

9. Սույն օրենքով նշանակված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է նաև կենսաթոշակառուի ներկայացրած գրավոր դիմումի և սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթի հիման վրա՝ դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից՝ Կառավարության սահմանած կարգով: Եթե սույն մասով վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

10. Սույն հոդվածի 1-ին մասում նշված՝ կենսաթոշակի չափը հաշվարկելու համար ստաժը (ստաժում հաշվառվող ժամանակահատվածները), հիմնական կենսաթոշակի չափը, ստաժի մեկ տարվա արժեքը և սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-12-րդ կետերում նշված մասնագիտական ստաժը (մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները) հաշվարկելու կարգը սահմանում է Կառավարությունը:

11. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-12-րդ կետերում նշված մասնագիտական ստաժում և 13-րդ կետում նշված 15 օրացուցային տարում, սույն

հոդվածի 1-ին մասում նշված՝ կենսաթոշակի չափը հաշվարկելու համար ստաժում կադրերի ռեզերվում գտնվելու ժամանակահատվածը չի հաշվառվում:

~~Հոդված 6. Պետական պաշտոն զբաղեցրած անձի, նրա ընտանիքի անդամների կենսաթոշակ ստանալու իրավունքը~~

~~1. Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակող մարմին, և նրան նշանակվել է կենսաթոշակ:~~

~~2. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակը նշանակվում է՝~~

~~1) պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարեցվելու) կամ աշխատանքից ազատվելու կամ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2.2-րդ, 2.3-րդ, 6-րդ, 7-րդ, 7.1-ին և 8-րդ կետերով սահմանված կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.~~

~~2) պետական պաշտոն զբաղեցրած անձի մահվան օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո 6 ամսվա ընթացքում.~~

~~3) հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.~~

~~4) դիմելու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են սույն մասի 1-3-րդ կետերով սահմանված 6-ամսյա ժամկետը լրանալուց հետո:~~

~~Սույն օրենքով սահմանված կենսաթոշակը նշանակվում է ոչ ավելի վաղ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից:~~

~~3. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, կենսաթոշակ նշանակող մարմինը, կենսաթոշակ նշանակելու և վճարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~4. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է պետական պաշտոն զբաղեցրած անձի և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի՝ հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:~~

~~5. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակը վճարվում է, կենսաթոշակ վճարելը դադարեցվում է, կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում և վերականգնվում է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով զինվորական կենսաթոշակների համար սահմանված կարգով:~~

~~*(6-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 01.12.14 ՀՕ-198-Ն, խմբ. 07.03.18 ՀՕ-143-Ն, փոփ. 21.06.18 ՀՕ-341-Ն)*~~

Հոդված 6. Պետական պաշտոն զբաղեցրած անձի, նրա ընտանիքի անդամների կենսաթոշակ ստանալու իրավունքը

1. Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակող մարմին, և նրան նշանակվել է կենսաթոշակ:

2. Կենսաթոշակը նշանակվում է՝

1) սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 6-րդ, 8-12-րդ կետերում նշված պաշտոնից ազատվելու (լիազորությունները դադարելու կամ դադարեցվելու) օրվանից,

եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

2) սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-5-րդ, 7-րդ և 13-րդ կետերում նշված պետական պաշտոն զբաղեցրած անձի՝ 65 տարին լրանալու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

3) սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետերում նշված պետական պաշտոն զբաղեցրած անձի՝ հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

4) սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում նշված պետական պաշտոն զբաղեցրած անձի մահվան գրանցման օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում.

5) դիմելու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են սույն մասի 1-4-րդ կետերով սահմանված 6-ամսյա ժամկետը լրանալուց հետո:

3. Սույն օրենքով կենսաթոշակը նշանակվում է ոչ ավելի վաղ, քան կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից:

4. Սույն օրենքով կենսաթոշակը նշանակվում և վճարվում է, կենսաթոշակը վճարելը դադարեցվում և վերսկսվում է, կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում և վերականգնվում է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է, կենսաթոշակից պահումները կատարվում են, ավել վճարված կենսաթոշակի գումարները բռնագանձվում, հետ գանձվում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգնվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված կարգով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

5. Պետական պաշտոն զբաղեցրած անձի՝ սույն օրենքով նշանակված կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող դադարեցվել այլ աշխատանք կատարելու

դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձը զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն:

6. Հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու հիմքով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցված լինելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է՝ այդ պաշտոնից ազատվելուց հետո մեկ ամսվա ընթացքում գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ ազատվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո դիմելու դեպքում՝ գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Այս դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է այն հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակը հաշվարկելու՝ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով, որից ազատվելու հիմքով վերականգնվում է անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը: Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

6. Սույն օրենքով կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, կենսաթոշակ նշանակող մարմինը, կենսաթոշակ նշանակելու և վճարելու կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 9. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը, պաշտոնատար անձին (պաշտոնատար անձի ընտանիքի անդամին) նշանակված կենսաթոշակները հաշվարկվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով: Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը նշանակված (հաշվարկված) կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը շարունակվում է վճարվել նախկին չափով:

2. 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի շենքում տեղի ունեցած ոճրագործության հետևանքով զոհվածների այրիներին և ծնողներին նշանակված կենսաթոշակը շարունակվում է վճարվել՝ անկախ նրանց տարիքից և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ պետական կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու հանգամանքից: Կենսաթոշակի իրենց բաժնեմասն առանձնացնելիս զոհվածների այրիներին վճարվում է նշանակված կենսաթոշակի 70 տոկոսը:

Սույն մասում նշված՝ կենսաթոշակն ստացող անձի մահվան դեպքում կենսաթոշակը շարունակվում է վճարվել զոհվածի ընտանիքի՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող մյուս անդամին՝ նրա դիմումի հիման վրա՝ հաշվի առնելով սույն հոդվածի 1-ին մասի դրույթները: Ընդ որում, այս դեպքում զոհվածի այրուն և ծնողին կենսաթոշակը շարունակվում է վճարվել՝ անկախ նրանց տարիքից և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ պետական կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու հանգամանքից:

~~3. 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև՝~~

~~1) «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով դատախազի պաշտոնից ազատված անձին, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը.~~

~~2) «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնից ազատված անձին.~~

~~3) հարկային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, որի լիազորությունները դադարել են «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը.~~

~~4) մաքսային ծառայության քննիչի պաշտոն զբաղեցրած անձին, որի լիազորությունները դադարել են «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով, եթե նա ծնվել է մինչև 1974 թվականի հունվարի 1-ը:~~

~~2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ առնվազն 20 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կենսաթոշակ է նշանակվում նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված այն անձանց, որոնք դատախազի կամ հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում (հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնում) նշանակվել են մինչև 2017 թվականի հունիսի 1-ը՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քննչական կոմիտեի ծառայողի պաշտոն զբաղեցնելուց հետո:~~

~~Սույն մասով սահմանված մասնագիտական աշխատանքային ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են Հայաստանի Հանրապետությունում դատախազի (մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը՝ դատախազի տեղակալի, դատախազի օգնականի և դատախազության գիտաուսումնական հաստատությունների՝ դասային աստիճան շնորհված աշխատողների), Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննիչի, պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնի քննիչի, ազգային անվտանգության մարմիններում քննիչի, հարկային ծառայությունում քննիչի, մաքսային ծառայությունում քննիչի (ներառյալ՝ մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը՝ դատախազության քննիչի, քննչական վարչության, բաժնի կամ բաժանմունքի պետի, պետի տեղակալի), հատուկ քննչական ծառայության ծառայողի, ԽՍՀՄ դատախազության համակարգում դատախազի և քննիչի պաշտոնում աշխատած ժամանակահատվածը, Հայաստանի Հանրապետությունում և ԽՍՀՄ-ում դատավորի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածը:~~

~~Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է հաշվարկային աշխատավարձի 70 տոկոսի չափով. 20 տարուց ավելի մասնագիտական աշխատանքային ստաժի յուրաքանչյուր լրիվ տարվա համար կենսաթոշակին ավելանում է հաշվարկային աշխատավարձի 2 տոկոսը, իսկ մինչև դատախազի պաշտոն զբաղեցնելը աշխատած և մասնագիտական աշխատանքային ստաժում չհաշվառվող յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ տոկոսը: Սույն մասով սահմանված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել հաշվարկային աշխատավարձի չափը:~~

~~Դատախազի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է դատախազի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիների համար տրվող հավելավճարի հանրագումարի) 90 տոկոսի չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, դասային աստիճանը և դատախազի, դատավորի, դատախազության քննիչի պաշտոնում աշխատած տարիները դատախազի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:~~

~~Հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է հատուկ քննչական ծառայության ծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի, դասային աստիճանի համար տրվող հավելման և հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած տարիների համար տրվող հավելման հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, դասային աստիճանը և հատուկ քննչական ծառայության ծառայողի, դատախազի կամ քննիչի պաշտոնում աշխատած տարիները հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:~~

~~Հարկային և մաքսային ծառայություններում քննիչի պաշտոն զբաղեցրած անձի հաշվարկային աշխատավարձի չափը որոշվում է հարկային կամ մաքսային ծառայության քննիչի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (հարկային ծառայության քննիչի համար՝ պաշտոնային դրույքաչափի, հարկային ծառայության դասային աստիճանի և հատուկ կոչումի համար տրվող հավելավճարների հանրագումարի, մաքսային ծառայության քննիչի համար՝ պաշտոնային դրույքաչափի, մաքսային ծառայության հատուկ կոչումի համար տրվող հավելավճարի հանրագումարի) և այդ գումարից հաշվարկված եկամտային հարկի տարբերության չափով՝ հաշվի առնելով վերջին պաշտոնը, հատուկ կոչումը (հարկային ծառայության քննիչի դեպքում՝ նաև վերջին դասային աստիճանը) հարկային կամ մաքսային ծառայության քննիչի պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ:~~

~~Հաշվարկային աշխատավարձը հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սահմանադրական դատարանի անդամի պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկվում է «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:~~

~~4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամին, դատավորին, դատախազին, հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնողին (հատուկ քննչական ծառայության ծառայողին) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը նշանակված կենսաթոշակները, սույն օրենքի 9-րդ հոդվածով նշանակված կենսաթոշակները համարվում են սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն նշանակված կենսաթոշակներ և հաշվարկվում են սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով հիմնական կենսաթոշակի չափը, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված գործակիցը և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը:~~

~~Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին (սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված) չափով:~~

~~5. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ սույն օրենքով սահմանված կենսաթոշակը նշանակվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, կամ դատախազի, հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձին կենսաթոշակ է նշանակվել սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով:~~

~~Սույն մասով սահմանված դեպքերում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակ նշանակվելուց հետո անցել է զինվորական ծառայության, նշանակվել է քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, դատավորի պաշտոնում կամ ինքնավար պաշտոնի է նշանակվել քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում:~~

~~6. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում:~~

~~Սույն մասով նախատեսված անձանց՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատավորի~~

~~պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով դատավորի լիազորությունների դադարեցման դեպքերում նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է դատավորի զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով:~~

~~Եթե սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը նշանակվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Սույն մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը:~~

~~Սույն մասում նշված աշխատավարձը հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~7. Դատավորի պաշտոն զբաղեցրած անձին 2014 թվականի հուլիսի 1-ից հետո սույն հոդվածով սահմանված կարգով նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է նշանակելու օրվանից՝ հաշվի առնելով որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարը): Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:~~

~~8. Եթե Օրենքով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է վճարովի աշխատանք կատարելու հիմքով (բացառությամբ այն դեպքերի, երբ անձն զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն), ապա կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է կենսաթոշակառուի դիմումի հիման վրա՝ Օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն: Եթե սույն մասում նշված՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու դիմումը ներկայացվում է մինչև 2018 թվականի դեկտեմբերը 30-ը, ապա կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է (չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է) 2018 թվականի մարտի 1-ից:~~

~~9. Մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնման օրը պաշտոնաթող Հանրապետության նախագահներին Կառավարության որոշմամբ տրամադրվում են «Հայաստանի Հանրապետության նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան երաշխիքները:~~

~~10. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 9-րդ կետերով և 3-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները կիրառվում են նաև մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը պաշտոնաթող Վերահսկիչ պալատի նախագահների նկատմամբ:~~

~~11. Հարկային կամ մաքսային ծառայության քննիչի պաշտոնից մինչև 2019 թվականի հունիսի 1-ը ազատված՝ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5.2-րդ և 5.3-րդ կետերի, 9-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի հիման վրա կենսաթոշակի իրավունք ձեռք բերած (ունեցող) անձին կենսաթոշակը նշանակվում է՝~~

~~1) 2019 թվականի հունիսի 1-ից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը.~~

~~2) դիմելու օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են 2019 թվականի դեկտեմբերի 1-ից հետո:~~

12. Քննչական կոմիտեի մասին» օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասով կենսաթոշակի իրավունք ձեռքբերած անձին նշանակված կենսաթոշակը համարվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 11-րդ կետով նշանակված կենսաթոշակ, եթե նշանակման օրվա դրությամբ անձի մասնագիտական ստաժը կազմել է առնվազն 20 օրացուցային տարի,

2) 14-րդ հոդվածով նշանակված կենսաթոշակ, եթե նշանակման օրվա դրությամբ անձի մասնագիտական ստաժը կազմել է 20 օրացուցային տարուց պակաս:

(9-րդ հոդվածը խմբ. 19.05.14 ՀՕ-29-Ն, լրաց. 10.06.14 ՀՕ-55-Ն, փոփ., լրաց. 01.12.14 ՀՕ-198-Ն, փոփ. 04.03.15 ՀՕ-14-Ն, փոփ., լրաց. 31.05.17 ՀՕ-91-Ն, 07.03.18 ՀՕ-143-Ն, փոփ., խմբ., լրաց. 21.06.18 ՀՕ-341-Ն, 01.07.19 ՀՕ-101-Ն, փոփ., լրաց. 21.01.20 ՀՕ-68-Ն)

(21.01.20 ՀՕ-68-Ն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի փոփոխությունը հնարավոր չէ կատարել, քանի որ նույն հոդվածի 1-ին ենթակետով 2-րդ կետում նշված բառերն արդեն իսկ փոխարինվել են:)

(9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերությունը, 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ «մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և գրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով» դրույթի մասով, 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 6-րդ մասի երրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթները, 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 6-րդ մասի չորրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումը, ինչպես նաև նույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝ դատավորներին վերաբերող մասով ճանաչվել են Սահմանադրության 29-րդ հոդվածին և 164-րդ հոդվածի 10-րդ մասին հակասող 18.06.19 ՍԴՈ-1463 որոշմամբ: 18.06.19 ՍԴՈ-1463 որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի հոկտեմբերի 30-ը:)

Հավելված 1
«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի
Ցանկ

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված պաշտոնների

1. Պետական քաղաքական պաշտոններ՝
1) Հանրապետության նախագահի պաշտոն
2) Ազգային ժողովի պատգամավորի պաշտոն
3) վարչապետի պաշտոն
4) փոխվարչապետի (առաջին փոխվարչապետի) պաշտոն
5) Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոն
6) նախարարի պաշտոն
7) նախարարի տեղակալի պաշտոն
2. Անկախ պետական մարմինների անդամների պաշտոններ՝

1) Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոն
2) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոն
3) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի պաշտոն
4) Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոն
3. Պետական վարչական պաշտոններ՝
1) Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
2) Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
3) վարչապետի աշխատակազմի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
4) Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
5) Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
6) Պետական եկամուտների կոմիտեի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
7) Վիճակագրական կոմիտեի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
8) Քաղաքաշինության կոմիտեի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
9) Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
10) Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
11) Կրթության տեսչական մարմնի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
12) Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
13) Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
14) Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
15) Ազգային անվտանգության ծառայության ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
16) ոստիկանության ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
17) Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի և նրա տեղակալի պաշտոն
18) Պետական պահպանության ծառայության պետի և նրա տեղակալի պաշտոն
19) վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարի պաշտոն
20) մարզպետի և նրա տեղակալի պաշտոն
21) Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոն
22) Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոն
23) գլխավոր ռազմական տեսուչի և նրա տեղակալի պաշտոն
24) Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ղեկավարի պաշտոն
25) Քրեակատարողական ծառայության ղեկավարի պաշտոն
26) Պրոբացիայի ծառայության ղեկավարի պաշտոն
27) Փրկարար ծառայության ղեկավարի պաշտոն
28) Սոցիալական ապահովության ծառայության ղեկավարի պաշտոն
29) Պետական արարողակարգի ծառայության ղեկավարի պաշտոն
30) Միգրացիոն ծառայության ղեկավարի պաշտոն
31) Ձրային կոմիտեի ղեկավարի պաշտոն
32) Գիտության կոմիտեի ղեկավարի պաշտոն
33) Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ղեկավարի պաշտոն
34) Ձբոսաշրջության կոմիտեի ղեկավարի պաշտոն
35) զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոն
36) Ռազմարդյունաբերության կոմիտեի ղեկավարի պաշտոն
37) Պետական գույքի կառավարման կոմիտեի ղեկավարի պաշտոն
38) Բարձրագույն որակավորման կոմիտեի ղեկավարի պաշտոն
39) Անտառային կոմիտեի ղեկավարի պաշտոն
40) Լեզվի կոմիտեի ղեկավարի պաշտոն
4. Ինքնավար պաշտոններ՝
1) Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոն
2) Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոն
3) ինքնավար մարմնի անդամի պաշտոն
4) Վիճակագրական պետական խորհրդի անդամի պաշտոն
5) Վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոն
6) գլխավոր դատախազի և նրա տեղակալի պաշտոն

7) Երևան քաղաքի դատախազի պաշտոն
8) մարզի դատախազի պաշտոն
9) կայազորի զինվորական դատախազի պաշտոն
10) հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն ~~հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի պաշտոն~~
11) քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն ~~Քննչական կոմիտեի նախագահի և նրա տեղակալի պաշտոն~~
12) պետական եկամուտների կոմիտեի քննչական մարմնում ինքնավար պաշտոն ~~Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության պետի պաշտոն~~
13) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոն
5. Հայեցողական պաշտոններ՝
1) հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոն
2) Հանրապետության նախագահի խորհրդականի, օգնականի և մամուլի քարտուղարի պաշտոններ
3) վարչապետի գլխավոր խորհրդականի, խորհրդականի, օգնականի և մամուլի քարտուղարի պաշտոններ
4) Ազգային ժողովի նախագահի խորհրդականի, օգնականի և մամուլի քարտուղարի պաշտոններ
(հավելվածը լրաց. 21.06.18 ՀՕ-341-Ն, փոփ. 24.03.21 ՀՕ-155-Ն)
(24.03.21 ՀՕ-155-Ն օրենքն ունի անցումային դրույթ)